

ԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԱՏԻՊ ԴԱՐՁՈՒՅԹՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՂՈՒՄԸ ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ «ԱԶԳԱՅԻՆ
ՋՈՋԵՐ» ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գրական ամեն մի ստեղծագործություն այս կամ այն չափով ներառում է ոճական ամենատարբեր միջոցներով ստեղծված պատկերային համակարգ: Վերջինս ենթադրում է ինչպես խոսքի, այնպես էլ ամբողջ ստեղծագործության զեղարվեստականության առկայություն, ինչն էլ ստեղծվում է հենց լեզվաոճական բազմաբնույթ միջոցներով ու հնարներով: Սրանցից կարևոր նշանակություն ունեն ոճաբանության մեջ քննվող պատկերավորման միջոցները կամ դարձույթները¹: Լեզվաոճական գործառնությով վերոնշյալ լեզվական իրողությունների ոճական արժեքն առավելապես մեծանում է, երբ դրանք գրողն գործածում է համատեղ՝ այս կամ այն իրողությունն առավել ամբողջական պատկերելու համար:

Սույն ուսումնասիրությունը նվիրված է Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջեր» ստեղծագործության մեջ ոճական միևնույն համատեքստում բառային տարատիպ դարձույթների համատեղ գործածության քննությանը: Ոճական հնարների համատեղման տակ այս դեպքում հասկանում ենք մեկից ավելի տարբեր բառային դարձույթների համադրումը մեկ ամբողջական ոճական համատեքստում: Պարոնյանը երգիծաբանի մեծ վարպետությամբ համատեղել է մի քանի տարբեր դարձույթ՝ վերջինս ի նպաստ դնելով ինչպես ամբողջ ստեղծագործության երգիծականացման, այնպես էլ զավեշտական, հումորիստական ամենատարբեր իրավիճակների, այս կամ այն «ազգային ջոջին» բնորոշ որևէ հատկության, սովորության, վարվելակերպի ու երգիծական կերպարի և մի շարք այլ նմանատիպ երևույթների լիարժեք ու ամբողջական պատկերմանը:

Տարատիպ դարձույթների համատեղմամբ ձևավորվում է մեկ ամբողջական ոչ միատարր դարձույթային կառույց, որը կարող է բաղադրված լինել երկու, երեք և չորս տարբեր դարձույթից, ըստ այսմ էլ ոճական համատեքստը արտահայտվում է երկբաղադրիչ, եռաբաղադրիչ և քառաբաղադրիչ կառույցներ:

¹ Դարձույթների մասին տես Գ. Բ. Ջահուկյան, Ֆ. Հ. Խլղաթյան, Հայոց լեզու. Ոճաբանություն, Երևան, 1976, էջ 60, Ֆ. Հ. Խլղաթյան, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Ե., 1976, էջ 32-33, Գ. Բ. Ջահուկյան, Ֆ. Հ. Խլղաթյան, Հայոց լեզու. Ոճաբանություն, Ե., 1998, էջ 77, Ա. Մարուքյան, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2000, էջ 136-139, Լ. Եգեկյան, Ոճագիտություն, Ե., 2003, էջ 332-333, Լ. Եգեկյան, Հայոց լեզու, Ոճագիտության ուղեցույց, Ե., 2007, էջ 66-67:

րի ձևով, վերջիններս էլ՝ դարծույթների տեսակով ու դիրքային առանձնահատկությամբ պայմանավորված, ունենում են արտահայտության մանրակաղապարային բազմաթիվ ձևեր: Նշենք նաև, որ վերոնշյալ բոլոր կառույցներն ամպայմանորեն ոչ միատարր են, քանզի բաղադրիչների դերով հանդես են գալիս տարբեր դարծույթներ: Ոչ միատարր բազմաբաղադրիչ դարծույթային ոճական կառույց կարող է ձևավորվել նաև բազմակի համեմատությամբ², որն առանձին վերցրած միատարր կառույց է, ու մեկ այլ (կամ մի քանի այլ) դարծույթ (ներ)ի միաժամանակյա կիրառմամբ: Տարատիպ դարծույթների համատեղմամբ ստեղծված ոճական համատեքստային տարբեր կառույցները քննում ենք առանձին-առանձին՝ հաշվի առնելով ինչպես բաղադրիչ-դարծույթների քանակային տարբերությունը, այնպես էլ սրանով պայմանավորված երկբաղադրիչ, եռաբաղադրիչ ու քառաբաղադրիչ ոչ միատարր կառույցների, վերջիններիս ներառած մանրակաղապարային տարբեր ձևերի առկայությունը: Բոլոր այս կառուցվածքային ձևերի բաղադրիչի գործառնությով հանդես են գալիս փոխանունությունը, հեզմանքը, համեմատությունը՝ տարբեր տեսակներով ու աստիճաններով, չափազանցությունը, անձնավորումը, մակդիրը, նվազաբանությունը և հասարակացումը: Նշենք նաև, որ ոչ միատարր ոճական կառույց ձևավորում են ոչ միայն տարբեր դարծույթները, այլ նաև միևնույն դարծույթն իր տարբեր տեսակներով: Մասնավորապես համեմատությամբ ոչ միատարր դարծույթային կառույցներ ձևավորվում են, երբ միևնույն ոճական համատեքստում միաժամանակ գործածվում են նշված միևնույն դարծույթի կամ տարբեր տեսակները, կամ միևնույն տեսակի տարբեր աստիճաններով ձևերը: Այսինքն՝ համեմատությամբ ձևավորված ոչ միատարր կառույցներն անպայմանորեն պետք է բաղադրված լինեն և համեմատության աստիճանով, և՛ տեսակով տարբեր համեմատություններից: Այս դեպքում ևս կարող է ստեղծվել բազմակի համեմատություն, ուստի ոչ միատարր բազմակի համեմատությունը կարող է միայնակ՝ առանց այլ դարծույթ (ներ)ի հետ բաղադրվելու ձևավորել մեկ ամբողջական ոչ միատարր դարծույթային ոճական կառույց:

Տարատիպ բառային դարծույթների համատեղմամբ ստեղծվում է համընդհանուր «դարծույթ+դարծույթ» ոչ միատարր կառույց, որն էլ իր հերթին ներառում է հետևյալ ենթակառուցվածքային ձևերը.

² Բազմակի համեմատությունների մի այլ հոդված, այս անգամ («Նույնատիպ բառային դարծույթների համատեղումը Հակոբ Պարոնյանի «Ազգային օրեր» ստեղծագործության մեջ»), տպագրության ընթացքի մեջ, ԳՊՄԻ գիտական հոդվածների ժողովածու:

1. «Դարձույթ+դարձույթ» երկբաղադրիչ կառույց, որի դեպքում ոճական համատեքստում համատեղվում են երկու տարբեր դարձույթներ: Այս դեպքում երկբաղադրիչ կառույցի բաղադրիչ են դառնում փոխանունությունը, հեզմանքը, ամծնավորումը, մակդիրը, չափազանցությունը և համեմատությունը: Բոլոր այս դարձույթներով ձևավորվում է 12 մանրակաղապարային ձև:

1.1. Այդ ձևերից է «փոխանունություն+հեզմանք» մանրակաղապարը, այսինքն ոճական միևնույն համատեքստում համադրվում են երկու տարաբնույթ դարձույթներ: Փոխանունությունը ոճական դարձույթ է, «որի կիրառության ժամանակ մի առարկայի անվանումը օգտագործվում է մեկ ուրիշի փոխարեն, բայց արդեն ոչ թե նրանց առանձին կողմերի ոչ հատկանիշների նմանության հիմքի վրա (ինչպես փոխաբերության դեպքում), այլ այն պատճառով, որ նրանք հարակից են, այսինքն՝ նրանց միջև գոյություն ունի անմիջական կապ՝ կցվածություն»³, իսկ հեզմանքը «դրական իմաստային երանգ ունեցող բառերի օգտագործումն է հակառակ իմաստով:

Հեզմական խոսքում սովորաբար առարկային (մեծ մասամբ մարդկանց) վերագրվում են այնպիսի դրական հատկանիշներ, որոնցից նա զուրկ է: Այդ ձևով էլ հենց ցուցադրվում է տվյալ հատկանիշների բացակայությունը:

Հեզմական արտահայտությունները միշտ պարունակում են նուրբ ծաղր, ուստի օգտագործվում են երգիծական նպատակներով⁴: Ավելացնենք նաև, որ այս հնարանքի «կիրառման դեպքում այս կամ այն բառը, կապակցությունը կամ էլ ողջ նախադասությունը կարող է գործածվել հակառակ իմաստով»⁵: Վերը քննած դարձույթների վարպետ կիրառման արտահայտությունն է «Մասիս» և «Փունջ» լրագրերի միջև ծագած վեճի նկարագրությունը, այսպես. «Ժողովրդյան ատելի չարագործի մը Մասիսի մեջ փառաբանվիլը տեսնելով Փունջ յուր պաշտոնակցի վրա կը հարձակի ապուշ, կենդանի, քսու և վատ պատվանուններով» (էջ 58):

Հասկանալի է, որ «պատվանուն» գոյականը կիրառվել է հակառակ իմաստով՝ հեզմանք ստեղծելու համար, քանի որ վերոբերյալ որակումները բնավ էլ պատվանուններ չեն, այլ անպատվություն արտահայտող բառեր են:

Նկատենք նաև, որ ոճական միևնույն համատեքստում առկա է նաև փոխանունության կիրառություն, այն է՝ «Փունջ» լրագրի անվանումը գործածվել է նրա հրատարակությունը ձեռնարկողների ու խմբագիրների անունների փոխարեն:

³ Թ. Ս. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 99:

⁴ Ֆ. Հ. Խլղաթյան, նշվ. աշխ., էջ 60:

⁵ Թ. Ս. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 72:

Հեզնանքն գործածվում է, երբ այս կամ այն երևույթը, հատկանիշը կամ էլ որևէ մարդու հարկ է լինում ծիծաղելի ներկայացնել ընդգծելով նշվածներին հատուկ որևէ բացասական կողմ: Այս ամենի հետ միասին հեղինակը հմարավորություն է ունենում արտահայտելու նաև իր վերաբերմունքը հեզնանքով պատկերվածի հանդեպ: Հենց հեզնանքի միջոցով էլ Պարոնյանը լավագույնս ծաղրում է «ազգային ջոջերից» յուրաքանչյուրին՝ միաժամանակ, երբեմն ակնհայտ, երբեմն ոչ դրսևորելով նաև իր վերաբերմունքը քննարկվող կամ նկարագրվող իրողության ու կերպարի հանդեպ: Իսկ ցանկացած հեզնական պատկեր առավել տեսանելի ու ցայտուն է դառնում, երբ նրա հետ համատեղ գործածվում է նաև մեկ այլ ոճական հնարանք: Սրա լավագույն արտահայտությունն է «ազգային ջոջ» Շիշմանյանի՝ հակաեկեղեցական գործունեությանը ուղղված ծաղրը, որն իրականացվում է «բարեկարգել» բայը՝ փոխաբերաբար գործածելով, ինչպես՝ «Կարծես Հռովմա եկեղեցին բարեկարգելու պաշտոնով դրկված էր աշխարհ, ինչպես Պեյքը փաշան Հայաստան դրկվեցավ, Հայաստանի քյուրտերն ի կարգ հրավիրելու համար. վասն զի լույս տեսնելուն պես սկսավ հարվածել յուր կրոնքը» (էջ 71):

1.2. Այս «ջոջին» ուղղված հեզնանքն առավել ցայտուն դրսևորում է ստանում հաջորդիվ կատարվող նույնական աստիճանի հաստատական համեմատությամբ, որը ընդգրկմամբ նաև ծավալուն է, քանզի «չի սահմանափակվում համեմատելիի ու համեմատյալի միջև այս կամ այն ընդհանրության, նմանության սոսկական հաստատագրմամբ, այլ փորձ է արվում պարզաբանել միտքը, ընթերցողին հասկանալի դարձնել համեմատության հիմքերը»⁶: Հենց նույն ծավալուն համեմատությամբ, երբ «բացահայտ կերպով համեմատվում են տարբեր առարկաներ ու երևույթներ, ցույց տրվում դրանց ընդհանրությունները»⁷, որով էլ Շիշմանյանն իր «բարեկարգիչ» գործունեությամբ համեմատվում և նույնացվում է կրոնահալած Պեյքը փաշայի հետ, ինչն էլ բացահայտում է «բարեկարգել» բայի հեզնական իմաստը, քանզի եկեղեցին բարեկարգող որևէ մեկը դժվար թե նույնացվեր կրոնահալած փաշայի հետ: Այսինքն՝ մեծ երգիծաբանը վարպետորեն համատեղ գործածել է հեզնանքն ու համեմատությունը (հեզնանք+ծավալուն համեմատություն)՝ վերջինս ի նպաստ դնելով առաջինի լավագույնս դրսևորվելուն:

1.3. Երկբաղադրիչ, ոչ միատարր կառույցի բաղադրիչ կարող են միասին դառնալ համեմատությունն ու չափազանցությունը (հաստատական համեմատություն+չափազանցություն): Չափազանցությունը ոճական դարձույթ է, խոսք

⁶ Թ. Ս. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 81:

⁷ Թ. Ս. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 78:

կամ արտահայտություն, ուր դիտավորյալ մեծացված են առարկան կամ նրա հատկանիշները⁸։ Այս դեպքում ստեղծված ոճական հնարանքը կարելի է կոչել չափազանցված համեմատություն, քանի որ համեմատությունը կատարվում է չափազանցումով արտահայտված հատկանիշի հիման վրա, այսպես է ընդթափանցում երանուհի Գարագաշյանը, ինչպես՝

«Թատրոնի բեմին չափ լայն սիրտ մը ունի» (էջ 219)։ Այստեղ կարող ենք տարանջատել միաժամանակ երկու ոճական հնար՝ չափազանցություն և «համեմատելի+կապ (չափ)+հատկանիշ (լայն)+համեմատյալ»։ Եռանդամ կաղապարով արտահայտված նույնական աստիճանի հաստատական համեմատություն։

1.4. Հաստատական համեմատությունը երկբաղնադրիչ, ոչ միատարր կառույց կարող է ստեղծել նաև փոխաբերության հետ համատեղ գործածվելու դեպքում (հաստատական համեմատություն + փոխաբերություն)։

Ս. Ա. Էլոյանը, անդրադառնալով բառի փոխաբերական իմաստին ու փոխաբերության քննությանը, գրում է. «Փոխաբերական է կոչվում բառի այն իմաստը, երբ բառը առարկաներն ու երևույթները նշում է անուղղակի կերպով։

Խոսքի մեջ բառերը կարող են գործածվել այնպիսի առարկաների, երևույթների ու հատկանիշների փոխարեն, որոնք որևէ հանգամանքով առնչվում, նմանվում են իրենց (բառերի) ուղղակի իմաստի ցույց տված առարկաներին, երևույթներին ու հատկանիշներին»⁹, իսկ «փոխաբերությունը բառի գործածությունն է մեկ այլ բառի իմաստով՝ հենվելով երկու երևույթների նմանության վրա»¹⁰։

Անտոն Հասունյանը պատրիարքական ու նախագահական իշխանությունների գլուխ անցնելով՝ ծավալում է ինքնուրույն գործունեություն, որն էլ ժողովրդին դուր չի գալիս։ Որոշվում է ստեղծել Ազգային ժողով։ այս որոշմանն ընդդիմանում է Հասունյանը, բայց Բ. Պաանը որոշմամբ «Հակահասունյանների» խնդրանքն ընդունվում է։ Հասունյանն ստիպված հրաժարվում է պատրիարքական իշխանությունից, և Պարոնյանը նրան համեմատում է երկաթի հետ, այսպես՝ «Հասունյան այս անգամ չկրցավ Բ. Պաան հրամանին դիմադրելու և ստիպվեցավ պատրիարքական իշխանութենն հրաժարիլ, պատճառելով, թե անձնական տկարություն ուներ, մինչդեռ օրը տասներկու անգամ կը ծաշեր և երկաթն մը ավելի քաջառողջ էր» (էջ 100)։

⁸ Ֆ. Գ. Խլիլաթյան, Նշվ. աշխ., էջ 85-86։

⁹ Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989, էջ 70-71։

¹⁰ Նույն տեղում, էջ 71։ Փոխաբերության մասին մանրամասն տես նաև Ֆ. Գ. Խլիլաթյան, Նշվ. աշխ., էջ 100, Ս. Ա. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984, էջ 93-107, Ս. Մարության, Նշվ. աշխ., էջ 162-167, Լ. Եգեկյան, Նշվ. աշխ., էջ 345-353, Թ. Ս. Շահվերդյան, Նշվ. աշխ., էջ 62-73։

Բաղդատական աստիճանի հաստատական համեմատությունը կառուցվել է «երկաթ» բառի բացառական հոլովածևի և «ալվելի» կապի միջոցով, որի հիմքում դրված է փոխաբերական իմաստով գործածված «քաջառողջ» հաստկանիչը, որը կիրառվել է «ամուր» իմաստով: Այսինքն միաթամանակ առկա է և համեմատություն, և փոխաբերություն: Ընդ որում վերջիններս սերտորեն փոխկապակցված են ոճական այս համատեքստում, քանզի մեկը՝ տվյալ դեպքում փոխաբերությունը, պայմանավորում է մյուսի՝ համեմատության դրսևորումը:

1.5. Երկբաղադրիչ և ոչ միատարր կառույցի բաղադրիչներ կարող են դառնալ միասին գործածված անձնավորումն ու հաստատական համեմատությունը (անձնավորում+հաստատական համեմատություն): Պարոնյանն ստեղծում է մի շատ դիպուկ փոխաբերություն, տվյալ դեպքում անձնավորումն՝ «անշունչ առարկիաներն ու կենդանական աշխարհի ներկայացուցիչներին մարդկային հատկանիշներ վերագրող ոճական հնարը»¹¹: Այսինքն շնչավորվում է «նկարչությունը»՝ ցույց տալու համար Յազըճյանի՝ նկարչությունից բնավ անտեղյակ լինելը, բայց և մեծագույն ձգտումը՝ տիրապետել նկարելու ունակությանը, որն էլ հենց ծիծաղելի դրության մեջ է դնում այս «ջոջին»: Այսպես՝

«Տարի մը ամբողջ նորեն նկարչության ետևեն ինկավ, նկարչությունը կը փախչեր: Սիմոնիկը ետևեն կը հալածեր, մինչև որ զայն ձերբակալեց նե՝ շատ հոգնեցավ, որովհետև գեղարվեստ մը ձեռք ձգելը ավագակապետ մը ձեռք ձգելու չափ դժվար է» (էջ 211):

Նկատենք, որ առկա է նաև «չափ» կապով կառուցված նույնական աստիճանի հաստատական համեմատություն, ուր արտահայտված են համեմատության բոլոր բաղադրատարրերը՝ համեմատյալ, համեմատելի և հատկանիշ:

1.6. Բառային դարձույթներից է նաև սակդիրը՝ «այն բառը կամ բառակապակցությունը, որը, դրվելով գոյականի կամ բայի վրա, կարող է խոսքն ավելի պատկերային ու գունագեղ դարձնել»¹²:

Սակդիրը կարող է դառնալ երկբաղադրիչ, ոչ միատարր կառույցի բաղադրիչ՝ համադրվելով ժխտական համեմատության հետ: «Ժխտական համեմատության դեպքում բացասվում է երկու երևույթների նույնությունը, նրանց նմանությունը ցուցադրվում է՝ ժխտելով այն հասկացությունը, որի հետ համե-

¹¹ Թ. Ս. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 67: Այլ սահմանումներ տես նաև Ֆ. Դ. Խլղաթյան, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Ե., 1976, էջ 9, Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2003, էջ 348, Լ. Եզեկյան, Ոճագիտության ուղեցույց, Ե., 2007, էջ 75, Գ. Բ. Չախուկյան, Ֆ. Դ. Խլղաթյան, Հայոց լեզու. Ոճաբանություն, Ե., 1998, էջ 82:

¹² Թ. Ս. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 96: Մանրամասն տես Ֆ. Դ. Խլղաթյան, էջ 68-69, Լ. Եզեկյան, էջ 334-340:

մատվում է»¹³։ Դեռ այս հնարքների միջոցով էլ Պարոնյանը «ազգի համբավավոր» ու «ազգի պարծանք» մարդկանց պակասն է ի ցույց դնում՝ բերելով մի քանի օրինակներ, որոնցից մեկն էլ կառուցում է՝ համատեղ կիրառելով հարակատար դերբայով արտահայտված մակդիրն ու բաղդատական աստիճանի ժխտական համեմատությունը, այսպես. «Ուրիշ մը, որ բորբոսնած ոսկիներ ունի, կը հանե հինգ ոսկի միայն կուտա սովյալներու Զանծնաժողովին և կը պնդե, որ ազգին մեջ իրմե ավելի առատածեռն մարդ չկա» (էջ 189)։

Ընդ որում՝ բաղդատումն իրականացվել է «բացառականով համեմատելի+«ավելի»+ հատկանիշ+համեմատյալ+ժխտական բայ» կաղապարով։ Նշենք, որ այստեղ ստեղծված մակդիրը բացահայտում է ժխտական համեմատության հեզնական իմաստը, քանզի «առատածեռն» մարդու ոսկիները դժվար թե հասցնեն բորբոսնեյ, ուստի ժխտական նախադասությունը վերաիմաստավորվում է որպես հաստատական։

1.7. Դեզմանքի հետ համատեղ կարող է կիրառվել նաև հեզնական համեմատություն։ Այս միջոցին է դիմում երգիծաբանը, երբ ծաղրի է ենթարկում «ազգային ջոջերից» մեկի բժշկական «տաղանդը», այսպես. «Քանի մը տարվան մեջ մեծ հառաջադիմություն ըրավ բժշկության մեջ. մանավանդ ջրային ճյուղին մեջ այնչափ հառաջ գնաց, որչափ գացին մեր... փոխառությունները» (էջ 73)։ Ոճական համատեքստից հասկանալի է, որ հեղինակը «այնչափ... որչափ» կաղապարով ստորադասական նախադասությամբ արտահայտված համեմատությունը կատարել է «ջոջին» երգիծելու համար։ Այստեղ համեմատությունն իրականացնող նախադասությունը գործածվել է հեզնական իմաստով, ուստի այն բովանդակությամբ վերաիմաստավորվում է որպես ժխտական նախադասություն¹⁴։

1.8. Հովսեփ Շիշմանյանի՝ համոզումների մասին ունեցած կարծիքը Պարոնյանը ծաղրում է՝ համատեղելով միաժամանակ երկու համեմատություն, այսպես՝ «Կը կարծեր, թե համոզումներն մարդերու պես են և թե քիչ մը նեղվելուն պես անմիջապես կրնան ամենը մեկեն մեկ կրոնքե ուրիշ կրոնք մը գաղթականություն ընել՝ ինչպես կընեն մարդեր մեկ քաղաքեն մյուսը» (էջ 74)։

Ինչպես տեսնում ենք, համոզումները «պես» կապով նույնացվում են մարդկանց հետ։ Ընդ որում՝ որպես բնորոշ ընդհանրություն, առավել համակողմանի բնութագրմամբ, համեմատության հիմք են ծառայում մարդկային մի շարք հատկանիշներ՝ «նեղվելուն պես», «գաղթականություն ընել»։ Նկատենք, որ

¹³ Լ. Եզեկյան, Դայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2003, էջ 343։

¹⁴ Դեզմական համեմատության մասին տե՛ս Թ. Ս. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 79։

«պես» կապով նույնական համեմատությունը կապվում է «ինչպես» հարաբերականով կառուցված ծավալուն համեմատության հետ: Երկու դեպքում էլ համեմատության մյուս եզրը «մարդերն» են, որոնց բնորոշ հատկությունները ծավալուն համեմատության մեջ պատկերվում են ավելի ընդարձակ ու համակողմանի ձևով: Այս դեպքում դարձյալ գործում է «համեմատություն+ծավալուն համեմատություն» ոչ միատարր, երկբաղադրիչ մանրակաղապարը:

1.9. Պոետներին ծաղրելու համար Պարոնյանն ստեղծում է և՛ չափազանցություն, և՛ սրանից բխող ծավալուն համեմատություն (չափազանցություն + ծավալուն համեմատություն), վերջինիս դեպքում՝ ավելի համակողմանի բնութագրելով համեմատվող եզրերին բնորոշ ընդհանրությունները. «Ինչո՞ւ կը քնանաք, ով պոետներ, որ երկու հանգ զոնելու համար Պառնասը կը շրջապատեք, որպեսզի Մուսայի մը թևեն քաշեք և ողորմություն խնդրեք իրեն, նման այն մուրափկներուն, որ եկեղեցիներու շուրջը կը շարվին» (էջ 112):

1.10. Դարձյալ ծավալուն համեմատությամբ, բայց արդեն համադրված հեզոնական համեմատության հետ (հեզոնական համեմատություն+ծավալուն համեմատություն), Պարոնյանը ծաղրում է հանգերն ու բառերը արհեստականորեն հարմարեցնելով բանաստեղծություն ոչ թե զրոյ, այլ սարքող «պոետներին», որոնց համար բառերի նշանակության անարժեքությունը ցույց տալու նպատակով բառերը համեմատում է «լաթի» կտորի հետ. «...սպանության ալ կը դիմեին. բառերն իրենց ձեռներուն մեջ այնքան արժեք ունին, որչափ լաթի մը կտոր դերձակներուն քով. զխեն, մեջքեն, կամ պոչեն կը կտրեն զանոնք» (էջ 114): Ծավալուն համեմատությամբ բացահայտվում են ու հիմնավորվում հեզոնական համեմատության հիմքերը, բացի այդ, հենց ծավալուն համեմատությամբ էլ բացահայտվում է կանխավ կատարված համեմատության ժխտական իմաստը: Այսինքն «այնքան... որչափ» կաղապարով արտահայտված նախադասությունը վերաիմաստավորվում է որպես ժխտական, այսպես. «Բառերն իրենց ձեռներուն մեջ այնքան արժեք չունին, որչափ...»: Այսինքն ինչպես «լաթի մը կտորն» է անարժեք դերձակների համար, այնպես էլ բառերը՝ «պոետների» համար, քանզի երկու դեպքում էլ համեմատվող երևույթների հանդեպ անփութ վերաբերմունք է դրսևորվում դրանց հետ առնչվողների կողմից: Մինչդեռ արժեքավոր ու արժևորվող երևույթների հետ անփութորեն չեն վարվում:

1.11. Սուքիաս Քազանճյանի ծննդյան թվականը հնարավորինս ճշգրիտ որոշելու համար հեղինակը հետաքրքիր ձևով համատեղում է միաժամանակ և՛ ծավալուն, և՛ զուգադրական համեմատությունները: «Իրենց ոճական երանգավորումներով և կառուցվածքով ծավալուն համեմատություններին նման են, այսպես կոչված, զուգադրությունները (ոմանք ոճական այս հնարանը կոչում

են մահ զուգահեռականություն), երբ խոսքի պատկերավորության, իսկ երբեմն մահ նկարագրվող երևույթը ավելի պարզ դարձնելու նպատակով համադրվում են երկու իրար հետ ինչ-որ չափով մոտ կամ հեղինակի կողմից որևէ հեռավոր նմանություն տեսած դրություն կամ վիճակ, մարդկային որևէ հարաբերություն, բնության որևէ տեսարան կամ երևույթ»¹⁵: Այսպես. «Չե՞նք տեսներ ամեն օր կիներ և օրիորդներ, որ երբ Բերա ելնեն իրենց գլխարկ մը առնելու, միշտ նախապատվություն կուտան այն գլխարկին, որ ավելի կը վայել իրենց դեմքին: Թվականներու հետ ալ այնպես վարվելու չե՞նք, ինչպես կը վարվի գեղեցիկ սեռը գլխարկներու հետ. վաթսուս տարեկան մարդու մը քառասուն տարին քիչ կուգա, երեսուն տարեկան մը հիսունը չի կարող տանիլ» (էջ 120):

Բերված համատեքստում մի Ժավալուն համեմատությամբ պարզաբանվում ու առավել ընդգրկուն ներկայացվում է մի առանձին երևույթ, որը դառնում է զուգահղությամբ ստեղծված ամբողջական համեմատության եզրերից մեկը, այնուհետ, սրա հիմքի վրա, բարդ ստորադասական նախադասությամբ «այնպես...ինչպես» կադապարով ձևավորվում է ինչպես զուգահղի համեմատության մյուս եզրը, այնպես էլ նույնական աստիճանի ոչ ծավալուն համեմատություն, որն էլ հենց կապող օղակ է դառնում զուգահղված եզրերի համեմատության համար: Նշենք մահ, որ ոչ ծավալուն համեմատությունը կառուցվել է յուրօրինակ ձևով, այն է՝ բաղադրիչ նախադասություններից գերադասը բնութով հարցական նախադասություն է: Ոճական համատեքստը կունենա «զուգահղություն, ծավալուն համեմատություն+համեմատություն» կառուցվածքային ձևը:

1.12. Սարգիս Պեյ Պալյանին Պարոնյանը նկարագրում է Ժխտական, բայց և ծավալուն համեմատությամբ (Ժխտական համեմատություն+ծավալուն համեմատություն), այսպես՝

«Զվարթ էր, և չէր այն մանուկներեն, որք ծնելուն պես կսկսին լալ, և զորս բնությունը կարծես չախելով աշխարհ ղրկած է» (էջ 186):

Այս դեպքում կառույցը ոչ միատարր է դարձել, որովհետև երկու բաղադրիչներն էլ միևնույն դարձույթի համեմատության տարբեր տեսակներ են:

2. Տարատիպ բառային դարձույթներով ստեղծվում է մահ եռաբաղադրիչ ոչ միատարր կառույց, երբ համատեղվում են 3 ոճական հնարանք: Ընդհանուր կառույցի մեջ առկա է եռաբաղադրիչ 4 մանրակաղապարային ձև: Այս դեպքում որպես կառույցի բաղադրիչներ հանդես են գալիս մակդիրը, չափազանցու-

¹⁵ Լ. Եզեկյան, Հայոց (եզվի ոճաբանություն, էջ 344: Այս մասին տես մահ Ա. Մարության, Հայոց (եզվի ոճաբանություն, Ե., 2000, էջ 150, Թ. Ս. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 81, Ֆ. Գ. Խլղաթայան, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Ե., 1976, էջ 36:

թյունը, նվազաբանությունը, հեզմանքը և համեմատությունը՝ ժխտական ու հաստատական տեսակներով: Ստացվում են մի շարք տարաբնույթ մանրակա-
ղապարներ:

2.1. Սրանցից մեկը «մակդիր+հաստատական համեմատություն +
չափազանցություն» կառույցն է, ընդ որում՝ վերջինս նաև չափազանցված
համեմատություն է, քանի որ համեմատությունը կատարվում է չափազանցված
ծևով: «Ազգային ջոջ» Սիմոնի նկարագրությունը կատարվում է միաժամանակ և
մակդրային պատկերով, և՛ չափազանցությամբ, և՛ համեմատությամբ, ինչպես՝

«Քիչ մը կրակոտ է, այնպես որ քիթին ծակերեն չունջ արտադրած ժամա-
նակը կը կարծւի թէ Շիրքեթի Խայրիեի շոգենավներեն մեկուն ծխնելույզն է, որ
կը ծխէ» (էջ 211):

Ոճական այս համատեքստում նախ «կրակոտ» մակդիրը պարզաբան-
վում է չափազանցությամբ, վերջինս էլ արտահայտվում է «կարծել» բայի
խոնարհված ծևով կառուցված նույնական աստիճանի հաստատական համե-
մատությամբ: Բոլոր բաղադրիչները փոխկապակցված են, քանզի մեկը փոխ-
պայմանավորում է մյուս(ներ)ի առաջացումը:

2.2 Հակոբ Պարոնյանը վարպետորեն համադրում է մի շարք ոճական
հնարներ և ստեղծում Ֆելեկյանի նկարագիրը, այսպես՝

«Ֆելեկյան էֆենտին պճնասեր չէ, ուրիշներուն պես հագվելու սզվելու
փափաք չունի, խել մը երիտասարդներու պես առտուները ժամերով հայելիին
առջը անցնիլ ու մազերը սանտրելու ալ սովորություն չունի (քազմակի ժխտա-
կան համեմատություն): Չմշկածագեն հոս գալու համար ճամբա ելած օրը
մայրն սանտրած էր մազերը. Ֆելեկյանն ալ այս հիշատակը անմոռաց պահելու
համար՝ այն օրեն մինչև այսօր սանտր դպցուցած չէ մազերուն» (էջ 214):

Համատեղվել են երկու ժխտական համեմատությունն ու մեկ նվազաբա-
նությունը, վերջինս հայտնի է նաև նվազասույթ, լիտոտա¹⁶, նվազաբերու-
թյուն¹⁷, նվազույթ¹⁸ անվանումներով, որի դեպքում «առարկայի հատկանիշը
կամ որևէ երևույթ ներկայացվում է նվազեցման, չափերի փոքրացման ու
թուլացման եղանակով»¹⁹:

Պարոնյանն այս հնարքին դիմել է, որպեսզի լավագույնս ի ցույց դնի
«պճնասիրության» հատկության բացակայությունն այս «ջոջի» մոտ, ինչն,
իհարկե, ծաղրվում է երգիծաբանի կողմից: Այսինքն «մազերը սանտրելու ալ

¹⁶ Ֆ. Հ. Խլղաթյան, Նշվ. աշխ., էջ 74:

¹⁷ Լ. Եզեկյան, Հայոց լեզու. Ոճագիտության ուղեցույց, էջ 74:

¹⁸ Թ. Ս. Շահվերդյան, Նշվ. աշխ., էջ 106:

¹⁹ Լ. Եզեկյան, Հայոց լեզու. Ոճագիտության ուղեցույց, էջ 74:

սովորություն չունի» նախադասությունը պճնասեր չլինելու դրսևորման մաս-
նակի արտահայտությունն է, ինչը պետք է հասկանալ ոչ թե լավ իմաստով թե
նա «պճնասեր չէ», այլ ընդհակառակն բացասական, հեզմական իմաստով,
ինչն էլ հաստատում է հենց Պարոնյանը՝ հաջորդիվ ստեղծված նվագույթի
միջոցով: Այսպիսով՝ նվագույթի միջոցով ստեղծվում է երգիծանք:

Ավելացնենք, որ նվագաբերությանը նախորդում է բազմակի ժխտական
համեմատություն, որը ներառում է «պես» կապով երկու ժխտական համեմա-
տություն: Բազմակի համեմատությամբ «ջոջը» համեմատվում է տարբեր
եզրերի հետ, մի դեպքում՝ «ուրիշներու», մյուս դեպքում՝ «երիտասարդներու»,
ընդ որում երկու դեպքում էլ հիմքերը տարբեր են: Վերջին համեմատությունը
կատարվել է ոչ թե մեկ, այլ երկու ոչ ընդհանուր հատկության հիման վրա, իսկ
նախորդը՝ մեկ ոչ ընդհանուր հատկության: Ժխտական այս համեմատություն-
ների հումորիստական ուղղվածությունը բացահայտվում է նվագաբանությամբ:
Փաստորեն համատեղված ոչ միատարր բազադրիչները և՛ փոխալայմանա-
վորված են, և՛ նպաստում են ամբողջական երգիծանքի ստեղծմանը (ժխտական
համեմատություն+ժխտական համեմատություն + նվագաբանություն):

2.3. Պարոնյանն անխնա ծաղրի է ենթարկում «ջոջ» Հարությունի
«ծայրաստիճան մաքրասիրությունը»՝ համատեղելով հեզմանքն ու երկու չա-
փազանցություն (հեզմանք + չափազանցություն + չափազանցություն): Այսպես՝

«Մաքրությունն այնքան կը սիրե, որ ձեռները չաղտոտելու համար ուրի-
շին մատներովը կը քերե գլուխը. բայց ամեն ատեն ուրիշին ձանձրություն
չպատճառելու համար՝ յուր բթամատը միայն գործածել սկսած է վերջերս» (էջ
94):

Եթե ուշադիր գտնվենք, ապա կհասկանանք, որ այս մարդը ոչ թե մա-
քուր ու մաքրասիրության ջատագով է, այլ, ընդհակառակն, նրա գլուխն
այնքան կեղտոտ է, որ իր ձեռքերը «մաքուր» պահելու համար գլուխը քորում է
ուրիշի մատներով՝ կեղտոտելով ուրիշի ձեռքերը: Այսինքն՝ այստեղ չափազան-
ցության հետ միաժամանակ Պարոնյանը դիմել է հեզմանքի, վերջինս բացա-
հայտվում է հենց չափազանցությամբ: «Մաքրությունն այնքան կը սիրե» հաս-
տատական նախադասությունը կիրառվել է ժխտականի փոխարեն՝ հեզմական
իմաստով: Սրանում համոզվում ենք ևս մեկ անգամ, երբ հեղինակը դարձյալ
դիմում է չափազանցության՝ նշված երևույթը ծաղրելու համար: Այսպես՝

«Եթե հարկ ըլլա ձեռները լվալ՝ դեղագործներեն գտված ջուր կը փնտրե»
(էջ 94):

Այս «ջոջի» մատներն այնքան կեղտոտ են, որ միայն գտված ջուրը
կարող է փրկել նրանց կեղտից, այլապես, կարծում ենք, որ մաքուր մատների

համար, որքան էլ նրանց տերը մաքրասեր լինի, բնավ հարկավոր չէ զտված ջուր փնտրել:

Այսպիսով՝ ոճական ամբողջ համատեքստում գործում են փոխկապակցված ոճական երեք հնարանք, որոնցից մեկը՝ հեզմանքը, արտահայտվում է կրկնակի անգամ կրկնակի չափազանցությամբ:

2.4. Եռաբաղադրիչ և ոչ միատարր կառույց կարող են ձևավորել նաև համատեղ գործածված հաստատական համեմատությունն ու նվազաբանությունը (հաստատական համեմատություն + հաստատական համեմատություն + նվազաբանություն), ինչպես՝

«Թատրոնը շարունակելու փափաքով փիղի չափ թերություններն իրեն ծանձի պես կերևան, և թե թատրոնին թերություններն մեկն իրեն ցույց տա՝ զանոնք ուղղելու հոգատար չէ, և կարծես լռեյայն կըսե. վերցուր այդ մոլորություններն թատրոնի մեջեն և ահա թատրոնն ալ կը վերնա» (էջ 207):

Նկատենք, որ «չափ» կապով նույնական համեմատությունը չափազանցված է, իսկ «պես» կապով համեմատությունը՝ նվազեցված: Միասին հանդես են եկել և՛ չափազացությունը, և՛ նվազաբանությունը, ընդ ուրում՝ երկուսն էլ համեմատությունների միջոցով, իսկ «նվազաբանության ոճական արժեքը ավելի ակնհայտ է դառնում, երբ այն գործածվում է չափազանցության հետ, այս դեպքում միաժամանակ մի երևույթի չափերը մեծացվում են, մյուսինը՝ փոքրացվում»²⁰, մինչդեռ մեր օրինակում միաժամանակ մեծացվել ու փոքրացվել են միևնույն երևույթի թերությունների չափերը: Նշենք նաև, որ ստացվում է եռաբաղադրիչ, բայց քառաբաղադրիչ լինելու միտումով, ոչ միատարր կառույց:

3. «Դարձույթ+դարձույթ» ոճական կառույցը կարող է բաղադրված լինել նաև չորս ոճական հնարանքից: Այս դեպքում գործում է քառաբաղադրիչ կառույցը, որի դեպքում համատեղվում է 4 ոճական հնարանք: Քառաբաղադրիչ և ոչ միատարր ոճական համատեքստ ձևավորում են մակդիրը, անձնավորումը, հասարակացումը և համեմատությունը՝ իր ժխտական ու հաստատական տիպերով: Այս դեպքում ևս գործում է 4 մանրակաղապարային ձև: Այսպես՝

3.1. Հակոբ Պարոնյանը, հանդգնություն համարելով Միսաքյանին «պուետ հորջորջելը», նրան նվաստացուցիչ ծաղրի է ենթարկում հետևյալ ուշագրավ ոճական միջոցներով, այն է՝ «պես» և «իբրև» կապերով կառուցված նույնական աստիճանի հաստատական համեմատություններով, որոնցից մեկով էլ ստեղծվում է հասարակացում, վերջինս էլ բացահայտում է անձնավորման առկայությունը:

²⁰ Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, էջ 357:

«Այսպես, Միսաքյան գրական ասպարեզին վրա հարստահարիչ քյուրտի մը պես ուրիշներու ստացվածքը հափշտակելով, իբրև մի սագ պուետի փետուրներով զարդարվել են վերջը. ճեմարանի աշակերտներուն դաս տալու տեղ սկսավ ապտակ տալ» (էջ 114):

Նկատենք, որ հասարակացումը՝ «անձնավորման հակառակ երևույթը, երբ մարդկանց վերագրվում են իրերին ու կենդանիներին հատուկ հատկանիշներ»²¹, կատարվում է համեմատության միջոցով, արդյունքում միևնույն ոճական համատեքստում միաժամանակ սերտ առնչակցությամբ դրսևորվում են չորս ոճական հնար: Հասարակացումն արտահայտվում է կրկնակի ձևով: Մի դեպքում Միսաքյանն է սագի նմանեցվում, մյուս դեպքում՝ պուետին վերագրվում է «փետրավոր» լինելու կենդանական հատկանիշը՝ սագին պոետական փետուրներով զարդարված բնորոշումը տալու համար, որի հիման վրա էլ կատարվում է սրանց նախորդող համեմատությունը: Նախ պոետը պիտի փետրավոր լինի, ինչն արվում է համեմատությամբ ստեղծված հասարակացմամբ, որ այնուհետ փետուրները կրող սագին վերագրվի պոետական հատկանիշը, ինչն էլ իրականացվում է անձնավորմամբ:

Այս ամենի արդյունքում ստացվում է հետևյալ պատկերը՝ համատեղվել են միմյանց փոխալայմանավորող մի քանի ոճական հնարներ՝ համեմատություններ, հասարակացում և անձնավորում, ինչը, կարծում ենք, հազվադեպ երևույթ է:

Այսպիսով՝ վերոբերյալ համատեքստում գործառված մի ոճական հնարը նպաստում է մեկ կամ մի քանի այլ հնարների լավագույնս ստեղծմանն ու դրսևորմանը:

Քառաբաղադրիչ կառույցը կարտահայտվի «հաստատական համեմատություն + հաստատական համեմատություն+ հասարակացում+ անձնավորում» մանրակաղապարով:

3.2. Քառաբաղադրիչ, ոչ միատարր կառույց համատեղ ձևավորում են նաև ժխտական և հաստատական համեմատությունները:

Պարոնյանը Յուսուֆյանի պաշտոնավարման ձևը բնութագրելու համար միաժամանակ գործածում է և՛ ժխտական, և՛ հաստատական համեմատություն՝ երկուսն էլ նույնական աստիճանով, ընդ ուրում՝ առաջինը «պես» կապով, երկրորդը՝ «այնպես... ինչպես» կաղապարով, որով ձևավորվում է բազմակի համեմատություն, այսպես՝

«Մենք առանց գիտենալու, թե Յուսուֆյան էֆենտին ի՞նչ ընթացք բռնած է յուր այս պաշտոնի մեջ, կրճանք վկայել, որ վարված չէ ոմանց պես, որոնք

²¹ Ֆ. Զ. Խլղաթյան, նշվ. աշխ., էջ 57:

ազգային պաշտոնատեղին այնպես կերթան, ինչպես կերթաս դուն վաճառատունը, մյուսն յուր խանութը և ես իմ գրասենյակս»(էջ 36):

Ինչպես տեսնում ենք գործածվել են ոչ միայն համեմատության երկու տեսակները միասին, այլև մի տեսակից կիրառվել է մի քանի (երեք) անգամ, որի շնորհիվ ստեղծվել է միջնորդավորված համեմատությունների շարք, այսինքն՝ մի երևույթը համեմատվել է մի քանի երևույթի հետ մեկ այլ համեմատության միջոցով: Ստեղծվել է բազմակի հաստատական համեմատություն, որի յուրաքանչյուր բաղադրիչ ենթադրում է միևնույն «այնպես... ինչպես» կաղապարի առկայություն:

Ոճական ամբողջ համատեքստի կառուցվածքն արտահայտվում է «ժխտական համեմատություն+երեք հաստատական կամ եռաբաղադրիչ բազմակի համեմատություն» կաղապարով:

3.3. Սարգիս Պեյպալյանի գրական կերպարն ստեղծելիս Պարոնյանը վարպետորեն համատեղում է մի քանի ոճական հնարանք, այսպես՝

«Ներելի՞ է արդյոք հեզնական գիրիչի մը հանդգնիլ այսպիսի հանճարավոր և հռչակավոր անձի մը փառքը գրելու՝ զոր կը պատմեն արդեն երեսուներեք ավելի հատորներ, որք մեր հրատարակած գիրքերուն պես թղթակազմ չեն, ոչ ալ լաթակազմ, այլ քարակազմ են» (էջ 185) (մակդիր+չափազանցություն+երկու ժխտական համեմատություն):

Համատեղված հանդես են եկել «հեզնական գրիչ» մակդրային կապակցությունը, որին հաջորդել է «ջոջի» փառքը մեծ չափերով ի ցույց դնելու համար գործածված չափազանցությունը, որի հենքի վրա էլ կատարվում է բազմակի ժխտական համեմատություն՝ տարբեր հատկանիշների հիման վրա մի երևույթը համեմատելով մեկ այլ երևույթի հետ և ի ցույց դնելով դրանց տարբերությունը:

3.4. Սարգիս Պեյ Պալյանի՝ մեքենագիտության ու ճարտարագիտության մեջ անգերազանցելիությունը ցուցադրվում է մի քանի ոճական հնար-բաղադրիչների միջոցով: Համատեղվում են համեմատությունը՝ նույնական և բաղադրական աստիճաններով, և անձնավորումը, այսպես՝

«Ինքը որչափ ճարտարապետ, նույնչափ ալ մեքենագետ է. ինչպես քարերն յուր հրամանավ շարվելով ամենուն հիացումը կը գրավեն, այնպես ալ երկաթներն իրարու մեջեն անցնելով՝ ոգի կառնեն և անուս մարդերու պարծեմալով կըսեն. մենք ձեզմե ավելի օգտակար ենք աշխարհին» (էջ 189):

Նույնական աստիճանի համեմատություններից մեկը արտահայտվել է «որչափ... նույնչափ», մյուսը՝ «ինչպես... այնպես» կաղապարով բարդ ստորադասական նախադասությամբ, բաղադրականը՝ «համեմատյալ + բացառական

նով համեմատելի + «ավելի» + հատկանիշ» կադապարով, իսկ անձնավորմամբ երկաթներն օժտվել են խոսելու մարդկային հատկությամբ:

Առաջին համեմատությամբ նախ ճարտարապետ Սարգիսը համեմատվում է մեքենագետ Սարգսի հետ, որին բացահայտման բնույթով կապվում է հաջորդ համեմատությունը: Ստացվում է «հաստատական համեմատություն+ հաստատական համեմատություն+անձնավորում+բաղդատական համեմատություն» կառույցը:

Ամփոփելով սույն ուսումնասիրությունը՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին՝

1. Հակոբ Պարոնյանի ստեղծագործության մեջ ռեալական միևնույն համատեքստում համատեղ կիրառվում են տարատիպ երկու, երեք և չորս դարձույթներ, որոնցով էլ պայմանավորվում է երկբաղադրիչ, եռաբաղադրիչ ու քառաբաղադրիչ կառույցների ստեղծումը:

2. Տարաբաղադրիչ ոչ միատարր կառույցները ներառում են քսան մանրակադապար, որոնք բաղադրվում են առնվազն երկու, միջինը՝ երեք, առավելագույնը՝ չորս ռեալական հնարանքից:

3. Գերակշռում են երկբաղադրիչ կառույցները:

4. Բոլոր կառույցների բաղադրիչներն անպայմանորեն փոխկապակցված են և փոխպայմանավորում են մեկը մյուս(ներ)ի առաջացումն ու դրանով իսկ նպաստում ռեալական այս կամ այն պատկերի ստեղծմանը:

5. Ոչ միատարր դարձությային ռեալական կառույց կարող է ծավալորել բազմակի համեմատությունը՝ հանդես գալով կամ միայնակ, այս դեպքում այն ներառում է տարբեր տեսակի ու տարաստիճան բաղադրիչ-համեմատություններ կամ այլ դարձույթ(ներ)ի հետ բաղադրվելով:

6. Համատեղելիության հատկության, հետևաբար և գործածության հաճախականությամբ գերակշռում է համեմատությունն ընդհանրապես, ապա՝ չափազանցությունը և հեզմանքը:

The combinability of lexical multi-functional tropes in H. Paronyan's "National Bigshots" literary work

In a stylistic context different tropes may be combined creating one unity, which may contain one, two, three or four tropes and accordingly the stylistic context may be expressed in the form of one - component, two - component, three - component or four - component constructions. The latter depending on their type and place specifics may have different multi- schematic expressions.

By the combinability of different tropes a new, non- homogeneous trop + trop construction is formed, which accordingly involves component + trop subconstructional forms. Multi-componential constructions include twenty schemes which may contain at least two, three or four stylistic expressive means.